

ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՀՎԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 21-ին, հինգշաբթի օր, երեկոյան ժամը 3.30-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում, կազմակերպվել էր հիշատակի երեկո Խրիմյան Հայրիկի մահվան հիսնամյակի կապակցությամբ։

Հանդիսության նախագահում էր Վեհափառ Հայրապետը։ Ներկա էին Մայր Աթոռի ամբողջ միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական կազմը, ուսանողությունը, վանքի պաշտոնեությունը և մասնավոր հրավիրյալներ։

Խրիմյան Հայրիկի մահվան հիսնամյակին նվիրված հիշատակի երեկոն բացվեց Հայկական ՍՍՌ Պետական Հիմնի նվագումով և «Տէր, կեցո» մաղթերգով, որոնք ունկնդրվեցին հոտնկայս։

Հանդեսի բացման խոսքն ասաց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը՝ ոգեկոչելով Խրիմյան Հայրիկի քաղցր հիշատակն ու սիրելի անունը։ Գ դասարանի ուսանող Կարապետ Սուքիասյանը մի հատված կարդաց Խրիմյան Հայրիկի «Խաչի ճառ»-ից։ Ա լսարանի ուսանող Հակոբ Պողոսպայլյանը խոր հուզումով մեներգեց «Հայրիկ, Հայրիկ» հանրածանոթ երգը։ Բարեշնորհ Սարգիս սարկավագ Սարգսյանը արտասանեց Պետրոս Դուրյանի «Խրիմյան Հայրիկ» բանաստեղծությունը։ Հոգևոր Ճեմարանի երգչախմբի կողմից երգված «Հայրիկն Հայոց» խմբերգից հետո, Խրիմյան Հայրիկի կյանքին և գործունեության նվիրված ընդարձակ և բովանդակալից զեկուցումով հանդես եկավ «Էջմիածին» ամսագրի խմբագիր պր. Արթուն Հատիտյանը։ Բ լսարանի ուսանող շնորհունակ Ժիրայր սարկավագ Ճերեճյանը ապրումով կարդաց մի հատված «Պապիկ և Թոռնիկ»-ից։ Ա լսարանից Խորեն Մելխանաջյանը մեներգեց «Բուխուրիկ»-ը (երաժշտություն՝ Գուրգեն Ալեմշահի)։ Հակոբ սարկավագ Գարաճյանը արտասանեց Սիամանթոյի «Խրիմյան Հայրիկ» բանաստեղծությունը։ Ապա «Թե թև ունեի» խմբերգից հետո խոսք առավ Վեհափառ Հայրապետը, մի անգամ ևս ապրեցնելով բոլոր ներկաների սրտերում Խրիմյան Հայրիկի պաշտելի անունն ու խնկելի հիշատակը։

Խրիմյան Հայրիկի մահվան հիսնամյակին նվիրված հանդիսությունը վերջացավ Տերունական աղոթքով։